

հայոց կաթողիկոսի, զոր հաստատուն պահեսցէ Տէր ի կամս իւր իւրայնօքն հանդերձ, ի թվականութեան հայոց տօմարի ՌՃ և ԻԴ (=1675):

1678ին Յովսէփ վրդ.ի հետ տպագրել տուած է Երեմիա Չէլէպիին Տնօրինական տեղիք քերթուածը, ի պատիւ Եղիազար կթղին. 1674 ին Ս. Յակոբի վանքին նուիրած է Ասուածաշունչ մը (ՄՁ. Թ. 1926):

ՍՈՒՔԻԱՍ ՂԱՓՈՒԳՐԱՆԵԱՆ, ՊԱԼԱՏՅԻ.— Հայրը Ալիբաան, մայրը Նազըր, կողակիցը՝ մհա. Կիւղ. իր ուխտաւորութեան առթիւ Ս. Յակոբի վանքին կը նուիրէ ոսկիէ սկիհ մը (ՄՁ. Թ. 532):

ՍՈՒՔԻԱՍ ՎՐԴ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՎԱՆԵՑԻ.— Մբ. Աւագանի անունը Յովհաննէս. Ձռ. 1857 ին: Ընդօրինակած է Տ. Հ. Թ. Սաւալանի խմբագրած 1851 տարիին պաշտօնական նամակները:

ՍՈՒՔԻԱՍ ՎՐԴ.— Մբ. 1793ին կը պաշտօնավարէր Բիթղեհէմի մէջ:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, ՆԻԿՈՄԻԴԱՅԻ.— Ծ. 1846 Յունիս 12ին. աւագանի անունը Սուրէն, պատանի հասակին մէջ կը մեկնի Արմաշ, ուրկէ վանքին միաբաններէն Գէորգ վրդ.ի հետ (յետոյ վանահայր Արմաշի) կը մեկնի Ջմիրուհիա. հոն կը պատահի Կարապետ վրդ. Շահնազարեանի որ Փարիզէն Պոլիս երթալուն կը հիւանդանայ եւ Սուրէն անոր նկատմամբ հոգածութիւն և զուրգուրանք ցոյց կուտայ և այդ պատճառով ի նշան սիրոյ կ'ստանայ անոր լուսանկարը և կ'արժանանայ քաջալերանքին: Գէորգ վրդ. Արմաշ կը վերագառնայ, բայց Սուրէն չուզելով նոյն վանքին մէջ մնալ՝ կը մեկնի Պոլիս եւ կը մտնէ Նուպար—Շահնազարեան վարժ.ը ուր թէ իբր աշակերտ եւ թէ իբր ուսուցիչ օգտակար կ'ըլլայ, այնպէս որ տեսուչ՝ Ներսէս եպս. Վարժապետեան սարկաւազ կը ձեռնադրէ զինքը եւ երբ 1871 ին Նիկոմիդիոյ առաջնորդ կ'ընտրուի իր հետը կը տանի Սուրէն սրկ.ը իբր քարտուղար և 1873ին վրդ. կը ձեռնադրէ և անունը կը դնէ Ստեփանոս: 1874ին Ներսէս եպս. ընտրուելով պատրիարք, կը մեկնի Պոլիս, փոխանորդութեան պաշտօնը իրեն յանձնելով: Ստեփան վրդ. կ'ընտրուի Առ. Նիկոմիդիոյ (1880—1915). եպս. կը ձեռնադրուի 1886ին, յետոյ